

- **Ներհայեցողութիւն**^[Ծ-40] (Intuition) հասկացութեամբ կարելի է բնութագրել մտքի այն կարողութիւնը, որով կարելի է տարբեր իրավիճակները, տեսակետները, օրինաչափութիւնները կամ ենթակայական համաձայնութիւնները արագօրէն եւ անմիջականօրէն (ուղղակիօրէն) ըմբռնել եւ յստակ որոշումներ կայացնել, առանց մտային-իմացական քննարկութիւններու եւ առանց գիտակից հետեւութիւններու կամ եզրայանգումի: *Ներհայեցողութիւնը* անդրանցական (Transcendence) ընկալումն է, որ ստեղծագործական գործունեութիւն կրնայ յառաջացնել:
- **Հայեցողութիւն**^[Ծ-29] հասկացութեան եզրոյթին կը համապատասխանէ յունարէն theōría եզրոյթը, որ հոգեւոր ու խորաթափանց տեսութիւնն ու դիտումն է: Հետագային, լատիներէնի մէջ ընդունուեցաւ contemplatio եզրոյթը, որ նոյնպէս խորաթափանց զննումն ու դիտումն է: Լատիներէն այս եզրոյթէն յառաջացան անգլերէն Contemplation եւ այլ լեզուներու նմանօրինակ եզրոյթերը:

Յունարէն theosophía եզրոյթը, որպէս ուսմունք եւ theósophos եզրոյթը, որպէս անձի վերաբերեալ ածական, շատ հաւանաբար յառաջացած են Հին Դարու (Antiquity) վերջաւորութեան (մ.թ. 2-րդ կամ 3-րդ դարերուն): Ժամանակաշրջանի եկեղեցոյ նշանաւոր հայրերէն՝ փիլիսոփայ-աստուածաբան **Կղեմէս Ալեքսանդրացի** (Clement of Alexandria, 150 – 215 թ.) եւ աստուածաբան ու պատմագետ **Եւսեբիոս Կեսարացի**² (Eusebius of Caesarea, 260 – 340 թ.), ինչպէս նաեւ Նոր-ալատոնական փիլիսոփայ **Պորփիրիոս** (Porphyrios, 233 – 305 թ.) օգտագործած են վերոյիշեալ գոյգ եզրոյթները: Պորփիրիոսի համաձայն, աստուածիմաստութիւնը՝ զուտ Աստուծոյ կամ աստուածայինին վերաբերող իմաստ(ուն)ութիւնն է:

Եկեղեցոյ առաջին շրջանի պատմահայր **Եւսեբիոսի** համաձայն, Քրիստոնէութիւնը կարելի է նաեւ բնութագրել, որպէս «*նոր ու ճշմարիտ աստուածիմաստութիւնը*», իսկ „theósophos“ վերադիրը կամ ածականը՝ պատուոյ վսեմ կոչումն էր «եկեղեցոյ հայրերուն»³:

2 **Եւսեբիոս Կեսարացիի** (Eusebius of Caesarea) մասին, տես *Եկեղեցոյ հայրերու* շարքին, Էջ 62 եւ **Մաս-9**, ՅԱԲԵԼՈՒՄԻ «Անուանացանկ» բաժինը, Էջ 687:

3 **Եկեղեցոյ Հայր** (լատ.՝ pater ecclesiae, անգլ.՝ Church Father, գերմ.՝ Kirchenvater).- Եկեղեցական բարձրագոյն տիտղոս, որ կը շնորհուի այն առաքինազարդ եկեղեցականներուն, որոնք վճռական ու մեծ ներդրում ունեցած են Քրիստոնէութեան ուսուցման եւ ինքնընկալման մէջ: ԹԷ՝ Ուղղափառ եւ թե Կաթոլիկ եկեղեցիներ ունին սրբադասուած *Եկեղեցոյ Հայրեր*:

Քրիստոնէութեան սկզբնական շրջանի 4 կարեւորները կը նկատուին.- **Ամբրոսիոս Միլանեցի, Հիերոնիմոս, Օգոստինոս Երանելի** եւ **Մեծն Գրիգոր Ա. Պապը**:

Այլ *Եկեղեցոյ Հայրերու* մասին, տես նաեւ Էջ 61-63:

Հայ Եկեղեցին եւս ունի բազմաթիւ սրբադասուած *Եկեղեցոյ Հայրեր*, որոնցմէ յայտնի է «*Երկոտասան Վարդապետք*» շարքը: